

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Маскъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Ցայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր թուին 2 կոպեկով.
Տէլէֆոն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Մայիս 10 Սարգսեան Գ. օգտագործող և իր որդիները, խորին ցաւով յայտնելով
առաջինը իր ամուսնու և վերջինները իրանց սիրելի օր

Ա. Ռ. Ա. Բ. Ե. Լ. Գ. Օ. Չ. Ա. Ե. Ա. Յ. Ի

մահը, որ տեղի ունեցաւ ամսին 22-ին, խորում են աղաւանդւել և ծանօթներին
շնորհ թողնում Սանդիկ, ամսին 25-ին, հիւղաբերի օր, առաւօտեան 10 ժամին:

1—1

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Կուտուրական և քաղաքական դաշնակցու-
թիւններ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլներ.
Անկախութիւններ Բագուում. Անհամարելի ձեռ-
նարկ. Մատենադարան. Նամակ Լուսաւից.
Նամակ Գերբերդի. Նամակ Խմբագրութեան.
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուսեր. — ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Կարապետի. Նա-
մակ Հարաւորակցի. — ԽԱՌԻ ԼՈՒՐԵՐ. — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անհա-
պանութիւն.

ԿՈՒՆՏՈՒՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇ-
ՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Այն օրը, երբ Ամերիկայի Միացեալ
Նահանգները պատերազմ յայտարարեցին
Կուրայի ազատութեան համար, անգլիա-
կան հասարակաց կարծիքը ամեն կերպ
խրախուսում է ամերիկացիներին և ողջու-
նում նրանց յաղթութիւնները: Թէ Անգլի-
այում և թէ Ամերիկայում սկսվեցին լրա-
վել միութեան և դաշնակցութեան հրա-
ւերներ. անգլոսաքսոնական ցեղի այդ եր-
կու խոշոր ճիւղերը միմեան ձուռնալու և ապա-
հայում միմեան գործելու: Անգլիական ամ-
ազգիները նուիրեցին մի շարք յօդուած-
ներ այդ միութեան խնդրին, յայտնելով
այն ընդհանուր կարծիքը, որ երկու մեծ

պետութիւնների դաշնակցութիւնը կարող
է երկրագնդին ամենամեծ քաղաքական ոյ-
ժը համարվել:

Անգլիական «Contemporary Review»
ամսագիրը մէջ «Պոլիթիկա» ստորագրու-
թեամբ յայտնի մի գրող, «Atlantic»-ի մէջ
նախկին միւնստր Օլիւէ և ուրիշներ հա-
մարում են այդ միութիւնը մի նոր դա-
րապուլու անգլոսաքսոնական ցեղի հասա-
րակական և քաղաքական զարգացման գոր-
ծում: Փոքր ինչ ուրիշ կարծիքի է նշա-
նաւոր «Review of Reviews» ամսագիրը,
որ թէ և միշտ բարոյեղ է անգլիական ազ-
գերի համբարաշխութեան գաղափարը, սա-
կայն քաղաքական դաշնակցութեան առա-
ջարկը համարում է վիճելի և ոչ ընդու-
նելի: Ամսագրի ասելով, դաշնակցութիւն-
ները ունեն իրանց բացասական կող-
մերն էլ, որոնք կարող են շատ անգամ
չքաջնել նրանց դրական արժանիքները:
Ներկայումս, ինչպէս յայտնի է, Ներսիսա-
յում գոյութիւն ունի երկու խոշոր դաշ-
նակցութիւն՝ ռուս-ֆրանսական և երեք-
պետեան՝ բաղկացած Գերմանիայից, Աւստ-
րիայից և Իտալիայից: Այդ դաշնակցու-
թիւնների մէջ մտնող պետութիւնները
ձեռք են բերել յայտնի ոյժ և հանգստու-
թիւն. բայց և կապվել են միմեանց հետ
այնպիսի պարտաւորութիւններով, որոնք

յայտնի սահմանների մէջ են դնում նրանց
ազատ գործունէութիւնը: Օրինակ՝ Ֆրանս-
սիան ինքնապաշտպանութեան մի գործ-
չի սկսի Իտալիայի կամ Գերմանիայի հետ,
Աւստրիան անկարող է առանց իր զինա-
կիցների համաձայնութեան քաղաքական
լուրջ քայլեր անել և միջազգային բա-
նակցութիւնների մէջ մտնել: Եւ ահա
«Review of Reviews» ամսագիրը կարծում
է, որ Անգլիան մտնելով քաղաքական դաշ-
նակցութեան մէջ, կարող է կորցնել իր
գործունէութեան ազատութիւնը:
Նր, որ այնքան էական օգուտներ է տուել
Բրիտանիային: Բոլոր ընդհանրութիւնների և
միջազգային թիւրմայութիւնների միջո-
ցին Անգլիան իրան ազատ է զգացել և
ստիպված է եղել իր շահերը գոհնել անս-
պասելի դէպքերի ազդեցութեան: Անգ-
լիական ամսագիրը մի շարք յօդուածներով
հրաւեր է կարդում բոլոր անգլիական
ազգերին միանալ ընդհանուր քաղաքակր-
թական գործունէութեան համար. իսկ
քաղաքական դաշնակցութիւնը համա-
րում է անձեռնմուռ Անգլիայի համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՐՄՈՒՆՆԵՐ

Թերթեց Կ. Պոլսի հայոց լրագիրները և ձեռ-
նարկ ամսականները չի մնա մի անհերքելի ձեռ-
ք ինքնապաշտպանութեան, որ գործում է ամերիկեայ
նիւթերի կուտակումների մէջ: Որքան հոգատար
է այդ ինքնապաշտպանութիւնը: Ինչ որ դուրսնալի է
կամ անմեղ, նոյն իսկ անմեղ, ինչ վերաբերվում
է դրսիներին, օտարներին, կամ վերացական
դատողութիւններին չըջանից չէ դուրս գալիս,
նա բաւական յարմար տեղ է բռնում լրագրա-
կան սինակներում: Օրվայ չարն ու բարին ար-
ձանագրվում է մեղմութեամբ. խօսքեր կուտ տա-
լը, կիսատ ձգարտութիւն և քողարկված իրո-
ղութիւն պատմել ամենամեծ իմաստութիւնն է

լրագրական գործիչների համար: Բայց այդ մեղմ
ու կակուղ ինքնապաշտպանութեան թեւերի տակից էլ
փոքրիկ, հազիւ լսելի ձայներ են դուրս գալիս,
որոնց եթէ մի տեղ հաւաքէք, կը ստանաք մի
ամբողջացրած իրականութիւն:

Փոքրիկ, համեստ ձայները գալիս են գաւառ-
ներէն և ամենքը մի և նոյն լեզուն ունեն. երկու-
կամ երեք բառով, շատ անգամ հառաչանքի մի
հատ չեղով նրանք ձեռ տալիս են հարկաւոր
ցաւերի անուն: Պէտք չէ մի առ մի արձա-
նադրել այդ անունները, մի տեղ ժողովեցէք բո-
լորը, տուէք մի ընդհանուր անուն — թշուառու-
թիւն, և ամեն ինչ պարզ կը լինի: Գաւառական
թշուառութիւնների չափը շատ մեծ է, այդպէս
են հասկացնում Կ. Պոլսի լրագրական մամուլը-
նեք: Մի տեղ գտնուողութեան թէ չէ հայ չը կայ,
միւս տեղ որքան են անհոգի մնացել: Եւ այդ
բոլոր տեղական մանր թէ խոշոր պակասութիւն-
ների վրա տարածված է մի ընդհանուր, համա-
տարած հեծեմանք — մարդ չը կայ, մարդկանց կա-
տարեալ սով է: Ինչ տեսակ մարդիկ են դրանք,
որոնք այնքան հարկաւոր են թշուառացած գա-
ւառներին, բայց որոնք չը կան, չեն ճարվում:
Ժողովուրդը տալիս է այդ մարդկանց անունը:
Բանից դուրս է գալիս որ կղերի, ի հարկէ,
պարտաճանաչ, բանիմաց կղերի սովն է, որի
մասին այնքան միաբան և միահամուռ աղաղակ-
ներ են տարածվում: Չը մտնեք այն հարցի
մէջ, թէ որքան ժողովուրդը անհալ է ըմբռ-
նում իր կարիքը, որքան արդարացի է այն յոյ-
սը, որ նա դրել է կամ սիրում է դնել հոգևորա-
կանների վրա: Փաստը այն է, որ մի անտէր,
խեղճ ժողովուրդը նայում է իր շուրջը, տեսնում
է իր դրսիները և գտնում է, որ եթէ շատ ու
շատ զրկանքներ կարելի է վերադրել երկրի
կամքին, համարել ճակատագրի, կայ մի բան,
որ այդ զրկանքների դառնութիւնն է սաստկաց-
նում և դա այն անապատն է, որ ներկայացնում
է հոգևորական դասը: Մի անգործ նահանգ
գտնուողութեան է, որ մի հատ եպիսկոպոս չունի:
Մեղք կը լինէր ենթադրել թէ ժողովուրդը
կարողութեան է միմյանիս եպիսկոպոսական զգես-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՉՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

ՀՈՒՆՏՈՒՆԱԿԱՆ ԵՒ ՎԻՃԱԿԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱ-
ՍԻՐՈՒԹԻՒՆ

Ժառանգականութեան ազդեցու-
թիւնը. — Մի սերունդի մէջ անհասկանալի
ժառանգականութեան շարունակելը յայտնի իրո-
ղութիւն է: Այս կէտի վրա առաջին անգամ
բնիկների ուղարկութիւնը հրաւիրողն եղել է
Վոլտեր: Արդարեւ, տեսնված են հօրեղայրներ,
մօրեղայրներ, հօրաքոյրեր, մօրաքոյրեր, հօ-
րեղորորդներ, մօրաքեռորդներ, 2, 3, 4, և
5 եղբայրներ, երբեմն ասելի, որ իրանց կեանքը
յուսահատ վճռով են վերջացրել: Շատ անգամ
այս տարաբաղդները, կեանքի մի որոշ շրջանին
հասնելով և իրանց հակամիտութեան ուժգնու-
թիւնից յաղթված՝ գործարկում են մտադրված
անհասկանալիութիւնը: Մի և նոյն ընտանիքի
պատկանող անհասկանալիութիւնը գրեթէ
միշտ գոյութիւն ունի, ինչ-
պէս որ վերջերս «Մշակի» մէջ «Արիւնակիցների
ամուսնութեան» յօդուածում մանրամասն բա-
ցատրված էր:

Անհասկանալիութեան վարակիչ և հա-
մաճարակ լինելը. — Մի դարմանաբ եթէ աս-
նեք, թէ անհասկանալիութիւնն էլ մի կրօնա-
գին հիւանդութիւնների կարգին է անցել, որով-
հետեւ վարակիչ և համաճարակ է: Սակայն ու-
ղում է ձանաչել նրա մի կրօնը, գիտնալ նրա
անունը... Համաճարակութիւնն, այն, մի քիչ էլ
համբերութիւն. յոյս դրեք գիտուններին վրա, որոնք
անհշուշտ մտտիկ ապագայում պիտի կարողա-
նան ձեռն առնալ անհասկանալիութեան գոհացում տալ:
Անշուշտ, ասացինք, որովհետեւ խօսքայի, թո-
քայի, կատարութեան, դիֆաւերիսի, ժան-

տախտի, և այլ հիւանդութեանց միկրօբները
տակաւին երէկ դտան... մինչդեռ այդ հիւան-
դութիւնները աշխարհիս չափ չեն էին:

Սրանից կէս դար առաջ Պրօսպեր Լիւկաս
գրում էր. «Ճարտարական հիւանդութիւն, ինչպի-
սին է անհասկանալիութիւնը... վարակիչ է, նոյն
իսկ համաճարակ է, նմանազորութեան օրէնքի
ամենից ասելի ստորակներէն մին է» Լիւկաս
ճիշդ է արտայայտել: Պարիզի, Լոնդոնի, Մար-
սելիայի, Բեռլինի նման մի քանի բազմամարդ
վայրերում ներգործութիւնների մի զուգակառ-
նութիւն գոյութիւն ունի, որ կենտրոնական
վառարանի նման բաւական սաստկութիւնով
տարածվում են և անհասկանալիութեան հակումը
արձարում, և ահա այն ժամանակ մի տեսակ
վարակիչ և համաճարակ աստ են դառնում: XV
դարում այս տեսակ մի համաճարակ Միլան քաղա-
քում մեծ ջարդ տուեց: 1793-ին Վէրսայը միայն
մի տարվայ ընթացքում 1,300-ից ասելի անհաս-
կանութիւնների ջրտմնելի տեսարաններին հան-
դիսատես եղաւ. նոյնպէս պատահեց նաև 1808-ին
Ռուէնում, 1811-ին Շտուտգարտում, 1866-ին
Պարիզում:

Երբեմն իսկ պատահում է, որ համաճարակը
միայն մի հաստատութեան մէջ է կենտրոնա-
նում: Աշխարհ յսել է մի արտաքին ոյժի գոհում
անկված այն կենտրոնակի պատմութիւնը, ուր
մի քանի օրվայ ընթացքում բանկարող զինուոր-
ների անկեղծացելը 15 հոգի իրանք իրանց կա-
խեցին: Զօրապետ Սերիւրիէն այս դուռը փակեց.
և դռան մի անդամից անհետանալով այլ ևս
ոչ ոք ինքն իրան կամ չը տուեց: Այս 1772
թվին տեղի ունեցաւ, և այդ ժամանակից ի վեր
նմանօրինակ դէպքեր յաճախ պատահել են, մա-
նաւանդ 1864-ին: «Մի շարակվայ միջոցում,
ասում է զօհուոր Մարի Գիւրան, այս հաստա-
տութեան բնիկը, ինչ շատ հեշտ եղաւ կախ-
տրված չուանիքից կապվել մի պարզ հաւաքա-
ծոյ:» 1805-ին Բուլօնէյի բանակի 5—6 զի-
նուորները մի և նոյն պահանջի խուլին մէջ

անհասկանալի եղել են. յիշեք նաև 1862-ին Պը-
տիտ-Ռօքէրի երկտասարդ կալանաւորների չըբ-
ջանում տիրող անհասկանալիութեան ճշմարիտ
համաճարակը:

Հաւաքական անհասկանալիութիւն.
— Լրագիրներում յաճախ կարդում ենք անհաս-
կանութիւնների այնպիսի ըստմնելի դէպքեր,
որ կատարված են լինում միաժամանակ, մէկից
ասելի, միացած անհասկանալիութեան: Անհաս-
կանութիւնն այս տեսակը, այս նորօրինակ
ձեռ կարող ենք անուանել հաւաքական անհա-
սկանութիւն, որը կարծես մեր դա-
րին յատուկ է:

Այս կերպ անհասկանալիութեան վրա 1897 թ.
նոյեմբեր ամսի սկիզբները Պարիզում, Իէպօի
հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Պոլ Գարնիէ մի
հրապարակական դատաւարութիւն կարդաց: Այդ
դատաւարութիւնից մի քանի մասեր քաղելով
առաջ ենք բերում:

«Բրիտանիկութիւնից ի վեր կրօնական բա-
րոյակաւորութիւնով արհամարհված, եկեղեցական
ժողովներով դատաւարութեան և սխօլատիքական
փիլիսօփայութեամբ մերժված անհասկանալիու-
թիւնը, որ միշտ բարոյական և կրօնական ոճ-
բագործութիւն է նկատվել, մեր օրէնքներով
պատմելի չէ: Մարդ իր կեանքը տրամադրելու,
ուղած կերպով գործածելու իրաւունքը վայե-
լում է: Սակայն անսովոր հանգամանքներում
կարող է դատաստանական հաշտանքի ենթարկ-
վել, և երբ են դատաւարութեան օրինակներ
ընդդէմ վերապաշտող ոճրակիցներին, ըստ ինքեան
ոճրական չը համարվող մի գործողութեան այս
եղական մեղաւկցին:

Այսպէս, երկու յուսահատվածներ անհաս-
կանութեան հարկաւոր պատրաստութիւնները
միացած են տեսնում, և անհրաժեշտ զանազան
միջոցները ընտրելուց կամ պատրաստելուց յե-
տոյ, անկեղծօրէն որոշում են վերջ տալ իրանց
կեանքին, ինքնասպան լինել: Նրանցից մինը
մահանքի աղաւթում է, և ինչ որ ճշմարիտ է,

իր կեանքի շարունակութիւնը ճակատագրի տարօ-
րինակ մի հանգիքին է պարտական. այս վերա-
կենդանացող յաճախ իր վրա հրաւիրում է
կամաւոր մարդասպանութեան ամբա-
տանութիւնը, որովհետեւ նմանօրինակ պարագա-
յում կանխամտածութիւնը արարկուսելի չէ:

«Ել ասելին կայ: Դատաստանական մի գոր-
ծողութիւն կատարվելու համար անհրաժեշտ չէ,
որ անհասկանալիութեան մեղաւկցիներէն մինը
իր մահը լինի գտած: Հերքէ է, որ նրա կեանքը
իր մեղաւկցի կողմից յայտնապէս վտանգի է
ենթարկվել, և նա նկատվում է բազմաւն ձե-
նասպանութեան իբր գլխաւոր կազմակեր-
պողն ու թիկնադիրը: Նմանօրինակ հանգաման-
քում, յարուցված մեղադրանքը համարվում է
կամաւոր մարդասպանութեան կամ նոյն իսկ
ոճրագործութեան փորձ:

«Վերակենդանացողի կողմից անհասկանալ-
ութեան մասնակցելու անկեղծութեան ինդիքը
յաճախ հարց է դառնում և վերջին ծայր դեմ-
աւորն անստուգութեան է մատնվում: 1847-ին
Պարիզի պատմական դատարանը մի նպարա-
վաճառ էր դատում, որի կիմը անկեղծան էր
գտնվել: Մի և նոյն սենեակում ամուսնիւր սա-
ռը և անդրայ ընկել էր: Սակայն նոյն ատեն
նրա անհասկանալիութեան ճշմարտութեանը չը
հաւատացին: Մանաւանդ նկատում էին, որ
կրակարանից դուրս եկած խեղդիչ զաղի անհո-
գին թթուի թանակութիւնը իրան և իր կոշի-
սպանելու համար չափից դուրս շատ էր, քանի
որ ամբողջ դիւրեկվայ ընթացքում ենթարկված
էր նրա թունաւորող ազդեցութեանը: Դարձեալ
նկատում էին, որ ամբողջ դիւրեկվայ ընթացքում
մի ճրագ չէ կարող վառել ամսային թթուով
ապակամված օդում, ինչպէս հաստատվում էր
մեղաւկցի խօսքերից, որը յայտնել էր թէ իր
կոշի մահից յետոյ ոյժ էր ունեցել վերկենալ և
գնալ մի քանի գաւաթ օդի կոնծելու: Ի դէպ,
մի պատուհանի ապակի ջարդված էր: Նպարա-
վաճառ մահվան պատմի դատաւարութեանը:

տին, «չափալ թաղին», ինչպէս ասում են Կ. Պօլսոմի Պանանջիւղով եպիսկոպոս, ժողովուրդը պանանջում է սիրտ ունեցող, ճարու հնար իմացող մի մարդ, որի հոգեւորական աստիճանը իրաւունք է միջոց կը տար նրան գործելու: Այդ հասկանում են շատերը. դարեւրդի ի վեր, դեռ Խորենացու ժամանակից, յայտնի է որ պէտք են լաւ առաջնորդներ: Բայց ինչ են անում:

Մրմունջներ շատ են լսում: Նրանց մեծ մասի դէմ դուր անող էք, բայց ինչ էք անում, երբ ոչ թէ մրմունջներով, այլ բարձր հառաչանքներով ձեռնից պանանջում են այն, ինչ դուք պարտաւոր էք տալ: Միթէ ձեզ միշտ կը փրկէ ձեր խելովները:

ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԳԻՈՒՄ

Յունիսի 19-ին Բագուում տեղի են ունեցել փողոցային անկարգութիւններ և թուրք խառնի-ճաղանձ ամբոխը յարձակվել է այդ քաղաքի հրէաների վրա: Տեղական «Բազմա» լրագրի հետեւ կերպով է պատմում այդ ցատկը: Յունիսի 19-ին, ցերեկով, Բագուի բնակիչ Քէր-բալայ Հուսէյնը յայտնում է 2-րդ մասի պարտաւոր, որ նրա 8 տարեկան եղբորդի Սալմանը անհետացել է: Նույնով այդ երեխային բերեց ոստիկաններն մի դուրսացել և յայտնեց, որ նա պատահել է փողոցում երկու հրէայի, որոնցից մէկը մի պարկ էր տանում շալակած, այդ պարկի մէջ ինչ որ մի բան շարժում էր. նա խեց պարկ է նրա մէջ գտաւ մի երեխայ. հրէան, Ռաֆայէլ անունով, կապաւորուեց և բերվեց ոստիկանատուն. ճանապարհին նա կարողացաւ փախչել, բայց նոյն օրը նորից կապաւորուեց:

Տեղական ժամէտականների մէջ տարածվեց երեխայի յայտնաբերված լուրը և նրանք բազմութեամբ, մօտ 200 հոգի, հաւաքվելով Աղիատակի փողոցում, սկսեցին ձեռնել քաղաքի հրէաներին. մօտ 200 հոգի ձեռնվեցին. ձեռնաձգները փախան ոստիկանատուն, որտեղից ոստիկանները հակոցողութեամբ ուղարկվեցին իրանց անբեր: Նոյն օրը Ղուբայից 14 «հրէա» երեք ձիւ և չորս էջի վրա նստած՝ մտնում էին Բագու. Կուրիսկի հրապարակում նրանց հանդիպեց մուսուլմաններին մի անաղին խումբ, չընդապառեց նրանց և սկսեց փախչել հարստաներ հասցին, իսկ երեխաները քաղաքի էին գցում. մի քանի հրէաների դուռը ջարդվեց. կուրը շարունակվեց մինչև ոստիկանութեան հասնելը:

Ուրեմն Բագուի հրէաների վրա բարդվում է այն մեղադրանքը, որ առհասարակ Փանատի-կոս ամբոխը դարերի ընթացքում սովոր է բար-

ձեղնալը նմանօրինակ մի քանի կեղծ և շինծո հաւաքական անհասկանութեան դէպքեր և յիշատակելուց յետոյ, անցնում է ճշմարիտ հաւաքական անհասկանութեան: Հեղինակի յիշած օրինակներից դուրս է գալիս, որ շատերն ուղեւորվով ծածկել իրանց ոճիւրը, դիմում են հաւաքական անհասկանութեան ձևակերպութեան. կեղծում են անհասկանութիւնը, հասնում են իրանց չար նպատակին և այսպէս իրանց ոճիւրն տարբեր գոյն և երանգով կամենում են խաբել արդարութեան պաշտօնականներին: Այժմ Եւրոպայում շատերը դիմում են այս վատ միջոցին, սակայն պէտք է խոստովանել, որ այս պարագաներում, արդարութեան գործադիր պաշտօնականները մեծ զգուշութիւն և բռնադատութիւն են ի գործ դնում, ապացուցանելու համար վերակենդանացող մեղակցի անկեղծ մասնակցութիւնը և կամ կեղծիքը:

Մեր այս ասածը հաստատելու համար կարեւոր ենք համարում մէջ բերել հետեւի օրինակը: Ներկայ գրութեան սկիզբները Պարիզում երկու յուսահատվածներ՝ Կոպլէն և Ժիւլիէտ Բլանի վճռեցին մեռնել: Այս ծրագրերը գործադրելու համար Կոպլէն իր սիրուհուն մօտենալով՝ իւրաքանչիւր ձեռքում բռնած երկու ատրճանակները նշանաւորութեամբ տրաքացրեց: Ժիւլիէտ Բլանի սպանվել էր: Իր սպանիչի դէմ դատավարութիւն տեղի ունեցաւ: Ամբաստանող ատենը սակայն նրան անպարտ հրատարակեց: Վճռադիրն ասում էր. «Եթէ կարողանար ինքն իրան սպանել, իր կողմից մի ոճիւր գործած չը պէտք է լինէր, բազմը, որ նրա կեանքը ազատել է, իրերի ընտանեկանը չէր կարող փոխել: Մի մարդասպան, մի ոճրագործ միշտ առաջնորդված է լինում բարեկամներից, վրէժիւնորութիւնից, փողատիրութիւնից. այս զգացումներից և ոչ միշտ մղած էր ամբաստանվածին. միայն յուսահատութիւնն էր իրան առաջնորդել: Եթէ երկուսը մէկանց ապրէին, պէտք է դատաւարութիւն երկուսն էլ իւր մարդասպան կամ փոխապարձ ոճրագործներ: Ոչ, անշուշտ Կա-

դել այդ հալածական ժողովրդի վրա: Ի հարկէ, խիստ ընտելութիւնը, որ արդէն սկսել են տեղական ոստիկանութիւնը և դատաստանական իշխանութիւնը, ցոյց կը տալ թէ որքան արդարացի է այդ մեղադրանքը. սակայն հարկաւոր ենք համարում առաջ բերել այստեղ և «Պալ. Անտոն» լրագրի ստացած տեղեկութիւնները, որոնք բոլորովին այլ գոյն են տալիս պատահած դէպքին: Այդ լրագրի թղթակցի ասելով, գործը պայտէս է պատահել. «Բագուի քարվանդաններից մինը, ուր սովորաբար իջևանում են դուրսացել հրէաները, կապալով վերցրել էր մի մահմետական, որի ձեռքից, սակայն, կապալը խեց դուրսացել մի հրէայ: Իրան վերադարձած զգալով քարվանդանային նախկին կապալաւորն և կամենալով որ և է կերպով վրէժիւնոր լինի նոր կապալաւորից, սկսեց լուրեր տարածել, թէ զուգայեցին հրէաները գոյանում են մահմետական երեխաներին: Այդ անհեթեթ լուրերը ունեցան իրանց ազդեցութիւնը և առաջ բերին թուրքերի վերոյիշեալ ընդհարումը հրէաների հետ»:

ԱՆՀԱՄԱՐԱԿՈՒՄ ԶԳՏՈՒՄ

Կ. Պօլսոմ մի հրէայ աղջիկ սիրահարվում է մի հայ երիտասարդի վրա: Նրիտասարդը, կամենալով, իր կարծիքով, մի քանի անգամ գործ կատարել, առաջարկում է աղջկան ուրանալ հայրենի հատարը և լուսաւորական միջոցով, ամուսնանալ իր հետ: Սիրահարված աղջիկը ուրիշ եղբ չէր գտնելով, փախչում է իր ծերունի հօր տնից և դիմում է հայոց պատրիարքարանին, որը յանձնում է աղջկան մի հայ ընտանիքի՝ պահելու, մինչև գործի վերջնական լուծումը: Մերումը հայրը դիմում է պատրիարքարան և յայտնում, որ իր աղջկայ հաւատափութիւնը կամաւոր չէ և համոզուեցով, այլ նա այդ քայլը անում է սովորով, սիրահարութեան ազդեցութեան տակ: Պատրիարքարանը հարցաքննում է աղջկան վկաների և հօր ներկայութեամբ, սակայն աղջիկը մերժում է հօրը և պնդելով իր հաւատափութեան վրա, պատահաւորութեամբ, «Հայ եմ և հայ պիտի մնամ»: Աղջկայ այդ յայտարարութեան վրա, պատրիարքարանը մերժում է ծերունի հօր խնդրը՝ վերադարձնելու իր գաւալին, իսկ տեղական մի երկու հայ լրագրիչներ իրանց ուղարկութիւնն են յայտնում, որ հայ լուսաւորչական հօտը աւելանում է մի հաւատարմաց աղջկով... Հայոց պատրիարքարանը ևս իր վարմունքը՝ չը վերադարձնել աղջկան ծերունի հօրը, համարում է միանգամայն օրինական և համապատասխան «հայոց եկեղեցու շահերին»:

տարվել է միայն անհասկանութիւն, աստուածային օրէնքներով և բարոյագէտ դատաւարութիւն մի ոճիւր, ոճիւրներից ամենից աւելի սոսկալին, որովհետեւ նրանցից ստղծվում իրաւունք չէ տրվել մարդու, սակայն մի և նոյն ժամանակ պատժական օրէնքներ էլ չէ նիւթարկվում:

Օրէնքի պանանջը պաշտպանելու համար արդարութեան միջնորդութիւնը այս վճռի դէմ բողոքեց և վճռալից ատենը արգարե 1838 թ. յունիսի 23-ին ջնջեց այդ վճիռը՝ հիմնված ընդհանուր պրոֆիտների սուած փայլուն ամբաստանագրի վրա: «Այստեղ կանխահաւան անհասկանութիւն չէ երևում, ասում է պրոֆիտը: Դիւպէն, գոյութիւն ունի մի մարդ, որը ընդունել է սպանելու պաշտօնը: Որովհետեւ, փոխանակ սպանել ինձ սպանիչը, ասած պիտի լինէին՝ մենք մեզ սպանենք. եղբորութիւնը ոճրագործութեան չը պիտի վերածէին. այն պարագային կրկնալի անհասկանութիւն կը լինէր, եթէ իւրաքանչիւր հարուածը ինքն իրան տար և մահ պատճառէր»:

Այս կեղծ հաւաքական անհասկանութեան օրինակները որչափ էլ շատ լինեն, սակայն դարձեալ պանաղան երկրորդում պատահում են բազմաթիւ ճշմարիտ հաւաքական անհասկանութիւններ. այս մասին դարձեալ խոսք տալիս ենք Պօլ Գաբրիէլին, ընտրելով բազմաթիւ օրինակներից միայն մին:

Պարոններ, ասում է Պօլ, այժմ պիտի տեսնենք հաւաքական անհասկանութեան բնմիջ վրա պատկերացած երկու, երեք, չորս անհասկանութիւններ: Բողոքովին նորագոյն դէպքեր ցոյց են տալիս, որ ընտանեկան անհասկանութիւնը կարողանում է մի հարուածով բազում զոհեր առաջ բերել: Ձեզ յիշեցնում եմ Հայէմ ընտանիքի անհասկանութիւնը, ուր 15, 13, 12, 10, 6 և 1 տարեկան վեց մանուկներ իրանց հօր հետ մեռած գտնվեցին, որոնցից միայն մայրը վերակենդանացած էր: Այս դէպքը հասարակութեան մէջ մեծ յուզումն է առաջ բերեց... Լրագրիչները երկար ժամանակ

Սակայն այդ իրողութիւնը չէր կարող չը գրգռել այն անձանց զայրոյթը, որոնք վարակված չը լինելով մոլեռանդութեան եռանդով, գործի վրա նայում են ոչ թէ ներք, կրօնական, այլ մարդկային տեսակէտից: Հայոց եկեղեցին միշտ խոյս է տուել բռնաճարմ մարդկային խղճման մտանքի վրա — և այդ նրա ամենալաւ յատկութիւններից միին է — իսկ իսկական քրիստոնէութիւնը երբեք չէ կարող թոյլատրել, որ յուսահատ սիրուց առաջացած ակամայ վարմունքը համարվի օրինաւոր և ճանաչվի կամաւոր: Յեն-վելով այդ ճշմարտութեան վրա, Կ. Պօլի գրողները մէկը, Գ. Զօհրապ, «Մասիս» լրագրի մէջ սաստիկ կերպով յարձակվում է հայոց պատրիարքարանի վարմունքի վրա, և հարցնում է. «Ինչ, որովհետեւ օտար աղջիկ մը, տկար արարած, յուսահատ սիրոյ մը տաղիտակին մէջ, իր սիրած տղուն համեմելու համար միայն, իր հաւատարմ կորստից, այս անհեթ նպատակով եղած հաւատափութիւնը ընդունելի և վաւերական բան մը կը սեպեն մեր եկեղեցու մեծերը»:

Եւ ճշմարիտ, ուրեմն մոլեռանդութիւնը այնքան բուռն է մեր մէջ, մարդասիրական և կրօնական զգացումները այնքան սուղացված, որ հայոց հոգեւորականութիւնը և Կ. Պօլի հայ մամուլի մի քանի օրգանները մի հրեւոյն քրիստոնէայ միջոցով մեծ աղողութիւն են համարում հայոց եկեղեցու համար: Եւ այդ գործում է այն պատրիարքարանը, որ տանիեակ հաղաւոր հայերի բռնի մահմետականութիւնը ընդունելու վրա ոչ մի ուշադրութիւն չէ դարձնում, ոչ մի բողոք չէ բարձրացնում, իսկ երբ մի հրէայ աղջիկ, սիրահարութեան ազդեցութեան տակ, մի անարժան քայլ է անում, պարծենում է այդ քայլով և խրախուսում նրան: Բողոքելով խղճման մտանքի այդ բռնաբարութեան դէմ, «Մասիս» յօդուածագիրը ցանկութիւն է յայտնում, որ հայոց եկեղեցին, իր ներդրումներից և ազատամտութեան սկզբունքների հիման վրա, թոյլատրել, որ մի հայ ամուսնանայ ուրիշ եկեղեցու մի գաւալի հետ, նոյն իսկ հրէայի և ոչ քրիստոնէայի հետ, առանց պանանջելու օտարի կրօնափոխութիւնը: Ամբողջ սրտով միանում ենք մեր այդ բողոքին և ցանկութեան:

Ա.

Մ Ս Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

«Էւ Տօլստօյի Կրէյցերեան Սօնատի վերջը» — Մ. Կրիստի, Թարգմ. Յ. Սարգիսեան, Վաղարշապատ, 1898. 32 էջ, գին 15 կոպէս:

Տօլստօյի գրեց «Կրէյցերեան Սօնատը» թէ մինչև սուպրակը, թէ սուպրակուց յետոյ այդ գրութեամբ անաղին աղմուկ հանեց ոչ միայն Ռուսաստանում, այլ և արտասահմանում: Պատ-

նրանով զբաղվեցին: Այս հրատարակութիւնը շատ վտանգաւոր է, սակայն այն արգելելու միջոցը...»:

«Ինչպէս Կօր (Ոճիւր և Անհասկանութիւն) իրողութիւնը նշանակել է և ինչպէս ես ինքն, 1892 թ. ինչ Բրուսէլում տեղի ունեցած Ոճիւր գործակաւն մարդ աբաւն ու թեան կ'օնգրէս ու մասում էի. «...այս դրամաների շուրջը բարձրացած աղաղակը գալիս է ուշ կամ կատու» չարժեքի նմանօրինակ գրողներին ընդունակութիւն ունեցողներին մօտ: Այս նմանութեան անդադարձում, որ յաճախ մի անհասկանութեան (unisuicide) մէջ երևան գալը տեսնվում է, այս փոխադրումը, հարցնում եմ, նշմարվում է հաւաքական անհասկանութեան մէջ: Գրեթէ երեք ամիս առաջ, մի վաճառատնում ծառայող չորս քանի աղջիկների իրանց տառապանքը իրար հաղորդելով, վճռում են գոյութեան ամուսնելի լինելը, կազմակերպում են մի հաւաքական անհասկանութիւն և այնուհետ մի գտնում իրանց մահը: Հազիւ անցնում է քանի շաբաթներից, ինչ անհասկանութեան կացած մի ընտանիք՝ հայր, մայր և երեք գաւալներ՝ ամուսնի ծովով չնշանեղծ է լինում: Եւ այս հաւաքական անհասկանութեան իւր մի հաւատարմ ընդօրինակութիւն, տանիերիւր առաջ արձանագրում էին Մարտո պրոֆիտայի գրաման, որ պարելեան հասարակութեան մէջ այնքան աղմուկ բարձրացրեց: Ընտանիքին պետք, Պ. Գրեթիւս, միջ թողել է մի դօկումէնտ: Մենք իրաւունք ունենք այն ընկելու և վիճաւանելու, ես այն նկատում եմ կրկնական մի անարկայ: Ահա թէ ինչ է ասում այդ դօկումէնտը:

«Էմ թէ օրիաւ... ասում է այս յուսահատը, — մարդուս միակ առաւելութիւնն այն է, որ կարողանում է ինքն իրան սպանել և ես նրան կը շահագործեմ: Ինչ վերաբերում է կնոջ, նա փափակում է ինձ հետեւել: Այս էլ իր իրաւունքն է: Ինչ որ վերաբերում է դաւանութեան, ինչպիսիք աւելի փափուկ է: Կեանքը չը ճանաչելով, նրանք չեն կարող իրանց համար մտա-

ճառը հասկանալի է: Տօլստօյ իր վէպի գլխաւոր հերոս Պօլիսիւնի մէջ գրեց մի տակալի առաւատանութիւն ժամանակակից մարդկութեան դէմ: Միայն Տօլստօյի պէս հսկայ տաղանդն էր կարող այնպիսի համարձակութեամբ գոյնը և գծագրութիւններ հաղորդել այդ տիպին, դեռ նրա մէջ այնքան մեծ ընդհանրութիւն, այնքան բովանդակութիւն, որը բացատրելու և պարզելու համար կարելի է հատուկ գրել: Նոյն իսկ մի կողմ դնել այն տեղեկանքին, որ Տօլստօյ իր բարդապետութիւնը գրել է այդ հաշակաւոր գործի մէջ, գրութեան իւրեւ գեղարուեստական ստեղծագործութիւն սարսուռ է ազդում իր անողորմ ճշմարտութեամբ, իր բնական բնաւորութեամբ: Եւ անա երևան եկան ընդհանրութիւններ, բողոքներ: Մի քանիները աշխատեցին վիպական գրութեանը հերքել «Կրէյցերեան Սօնատի» միջոց, մեղադրել նրա մէջ դրած դրամայի դաւանութիւնը: Մեղ ծանօթ աղբիւսի գրութեան մէջ, մեր կարծիքով, փոքր ի շատեւ աղողված կարելի է համարել Պօլ-Սոնատի «Die Cis-Moll-Sonate»-ը, որի առաւելի թարգմանութիւնը լոյս տեսաւ 1892 թ. ինչ: Այդ վէպի վրա չէ ինչն ըստ ինքեան, բայց երբ դնում էք Տօլստօյի գրութեան կողքին, բոլորովին նոյննաւում է: Իսկ Կրիստի այս փոքրիկ գործը, որի հայերէն թարգմանութիւնը հարկաւոր է համարել տալ Յ. Սարգիսեան, մի ողորմելի բան է, որովս թանկանալի անուն և կաթոլիկ օրթոդօքսութեան հոգով: Քննել գրութեանը շարժ. անհասկանաւոր հարցը, որ ծագում է այս գրքով տեսնելիս, այն է թէ ինչ միջոց կար թարգմանել նրան, քանի որ ինքը, «Կրէյցերեան Սօնատը», չը կայ ուսուսանելի մէջ: Ափսոսում ենք թարգմանել աշխատութիւնը և հարցնում ենք. միթէ, պարոններ, ուրիշ գրեք չէք գտնում, որոնք արժանի լինեն հայերէն թարգմանութեան:

ՆԱՄԱԿ ԳՈՒԲԱՑՈՅՑ

Յունիսի 17-ին

Նորերս մեր քաղաքային վարչութեան դահլիճում ընդկեց երկու մարդու, այն է պ. պ. Ս. Յովհաննիսեանի և Գ. Բոստոմեանի խնդրերը: Նրանք ինչպիսիք էին, որ քաղաքի արեւելեան մասում քաղաքի կողմից հող տրվի 130 տներ կառուցանելու համար մի խումբ բազմաբնակների համար, որոնցից 130 մարդ այդ մասին լրագրութիւն են տուել յիշեալ երկու երիտասարդներին: Այդպիսի զանազան քաղաքային վարչութեան կողմից (ձայնաւորների միջամասնութիւնը նպատակեց այդ հարցում բազմաբնակներին), դրանք վերադարձան Բագու: Ուրեմն շուտով

ձեք, որոշումը ինձ է պատկանում. նկատում եմ, որ նրանց մեծ ծառայութիւն մատուցած կը լինեմ, եթէ այս աշխատում նրանց մեռնակ չը թողնեմ: Այս երեխաները, որոնց ես պաշտում եմ, միշտ եղանակ են եղել, միայն երջանկութիւն էին վայելելու և ես չեմ կամենում, որ նրանք հասկանան թշուառութիւնը...»:

«Անհասկանութեան պատճառները բազմադիմ են. սակայն մի կողմից մեր դարու յատուկ բարոյական սաստիկ դիւրագրողութիւնը և միւս կողմից ալիօճարականութիւնը իմ կարծիքով, պատճառաբանութեան երկու գլխաւոր երկրորդներն են:

«Ուրում եմ վերջացնել մի յիշատակով, որ հաղորդում է մի երեկի փիլիսոփայ: Վինլոս իր գրքում (Anatomie du suicide) պատմում է հետեւեալ անէկդոտը: Վոլտեր, Անդրայում փախուսական եղած միջոցում, խօսակցում էր մի գիշեր մի հարուստ մարդու հետ՝ մարդկային յոռութեան վրա: Նիւլը այնքան տաքացրեց նրանց երեսակայութիւնը, որ որոշեցին հետեւեալ առաւօտ միասին բաժանվել այնքան ապականված մի աշխարհից: Բնիկը իր խոստման վրա հաւատարիմ՝ վաղ առաւօտ Վոլտերին ներկայացաւ, նրան յիշեցնելու համար իրանց խոստումը: Վոլտեր բաւական համարեց նրան պատասխանել: «Ո՛հ, պարոն, ներքեցէ ինձ, երկար բռն եմ եղել, իմ դարձանո ներքործել է և արեւակը գտնվում է իր բոլոր պայծառութեան մէջ:

«Պարոններ, տեղն է մտածելու, թէ անհասկանութեան ունեակութիւնը ընաւ արժան չը պիտի բռնէ մեր վարք ու բարքի մէջ, ինչպէ՞ որ կամաւոր մահվան գաղափարը չէր կարողացել հիմք բռնել Վոլտերի ուղեղում. կեանքի հետ հաշտվելու համար հաւատանք բարեբաղքին ազդեցութեան, որ մեր յոյնած մարմնի ոյծերը վերակազմում է և արեւակին, որ մեր միտքը գուարթացնում է»:

(Կը շարունակվի)

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13